ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար ախտահանման-մակաբույծների ոչնչացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» հուլիսի 2021թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Սարգիս Ղուկասյան՝ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Ալիխանյան՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

Ռուզաննա Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի արխիվային փաստաթղթերի պահպանման բաժնի արխիվի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (02.07.2021թ.)՝ ժամը 15:00-ն,

-հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

-էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 06.07.2021 թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	Ախտահանման – մակաբույծների ոչնչացման	4 332 500

	ծառայություններ	

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Մասնակցի գործունեության հասցեն**
ԵրՄիք ՍՊԸ	ք. Երևան, Տերյան 83-22
Ախտահանման կենտրոն ՓԲԸ	ք. Երևան, Մովսես Խորենացի 160/2

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/02» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	ԵրՄիք ՍՊԸ	2 000 000	0 %	2 000 000	1 660 000	0 %	1 660 000
1	Ախտահանման կենտրոն ՓԲԸ	4 300 000	0 %	4 300 000	4 300 000	0 %	4 300 000

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 06.07.2021թ.՝ ժամը 15:32-ին և ԵրՄիք ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի /դիմում-հայտարարության/ առկայության մասին.

ԵրՄիք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթուղթը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1)/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ԵրՄիք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված չէ ղեկավարի անուն ազգանունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2021թ. հուլիսի 09-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի պահանջներով՝ հայտում արձանագրված անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հուլիսի 08-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Սարգիս Ղուկասյան

Արմինե Ալիխանյան

Ռուզաննա Հարությունյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան